

Ծրագրի արդյունքները (2018 թ-ի հունիսի տվյալներով)

- ✓ Բռնակոթ համայնքում արտադրվող կաթնամթերքը և պանիրը (Սեյրան Առաքելյան Ա/Ձ) մուտք են գործել միջազգային շուկա: 2017 թ-ին գյուղացիներից գնված կաթի քանակը 2016 թ-ի համեմատ աճել է 33%-ով, գյուղացիների՝ կաթի վաճառքից ստացվող եկամուտը աճել է 31%-ով, 80 գյուղացի մատակարարում են կաթ, որոնց 40%-ը կանայք են:
- ✓ Մշակվել է «Հայաստանում դեգրադացված բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքերի բարելավման միջոցառումների ուղեցույց», որի փորձարկումը սկսվել է Սիսիանի տարածաշրջանի 2 խոշորացված համայնքներում (6 բնակավայր)՝ 10,5 հա տարածքում:
- ✓ Սյունիքի մարզի պիլոտային համայնքներ կատարված փոխայցերի արդյունքում բարձրացվել է Արագածոտնի և Շիրակի մարզերի պիլոտային համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների և մարզային կառույցների ներկայացուցիչների իրազեկվածությունը արոտների կայուն կառավարման վերաբերյալ:



Արոտավայրերի վիճակի բարելավում՝ դեգրադացվածից դեպի լավ

Հրատարակվել է

Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH –ի կողմից

Գրանցված գրասենյակներ՝

Բոն և Էշբորն, Գերմանիա

«Կենսաբազմազանության ինտեգրված կառավարում, Հարավային Կովկաս» (ԿԻԿ)

ԳՄՀԸ (GIZ) Հայաստանյան գրասենյակ

Բաղրամյան պող. 4/1, 0019 Երևան, ՀՀ
Հեռ.՝ +374 (0)10 581877

ibis@giz.de

www.giz.de

www.biodivers-southcaucasus.org

Լուսանկարներ՝ © ԳՄՀԸ ԿԻԿ Հայաստան, ՌԶԳ ԿԿ

Քարտեզ՝ © ԳՄՀԸ ԿԻԿ Հայաստան

Հունիս, 2018

Հղումներ՝

Սյունիքի մարզպետարանի պաշտոնական կայք
<http://syunik.mtad.am/>

Սիսիանի համայնքի զարգացման ծրագիր
<http://syunik.mtad.am/hzargatsmantsragrer/>

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն
http://www.armstat.am/file/Map/MARZ_09.pdf
<http://armstat.am/file/doc/99483283.pdf>

Եվրոպական ռազմա-արտադրություն Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի վերաբերյալ
<http://biodivers-southcaucasus.org/wp-content/uploads/2016/03/Sisian-eng.pdf>

Արոտավայրերի մշտադիտարկման ձեռնարկ. Հայաստան
<http://www.mtad.am/files/docs/895.zip>

Արոտավայրերի ու խոտհարքերի կայուն կառավարման պլանների կազմման և իրականացման ուղեցույց
<http://www.mtad.am/files/docs/1469.pdf>

Զեկույց Բռնակոթի պանիր գործարանի զարգացման վերաբերյալ



ՀՀ Տարածքային
կառավարման և
զարգացման
նախարարություն



Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by

giz Deutsche Gesellschaft
für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH

SDA Strategic
Development Agency
Strategies for Development


ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐԱԾ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ

ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ և ԽՈՏԱՀԱՐՔԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՀԵՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՊԻԼՈՏԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ՝ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՍԻՍԻԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

2018 թ.



Սյունիքի մարզ

Աշխարհագրական դիրք. Մարզը գտնվում է Հայաստանի հարավում՝ զբաղեցնելով 4,506 կմ² տարածք, որը կազմում է ամբողջ ՀՀ տարածքի 15,1%-ը: Իր տարածքով Սյունիքի մարզը ՀՀ երկրորդ ամենամեծ մարզն է: Տարածքի ռելիեֆը լեռնային է՝ պատված խիտ անտառներով: Զանգեզուրի լեռնաշղթան զբաղեցնում է Սյունիքի տարածքի մեծ մասը: Տարածաշրջանի ամենաբարձր կետը կապուտջուղ լեռն է՝ 3,906 ծ.մ բարձրությամբ, իսկ ամենացածրը՝ Մեղրիի կիրճը (Արաքսի հովիտ 380 ծ.մ բարձրությամբ):

Կլիմա. Տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է մոտ 22°C, թեպետ ամռանը բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կարող է հասնել մինչև 40°C: Ձմռանը բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կարող է նվազել մինչև -34°C:

Բնակչություն. 153,000 մարդ՝ 2018 թ-ի հունվարի դրությամբ:

Սիսիանի տարածաշրջան

Աշխարհագրական դիրք. Սիսիանի տարածաշրջանը գտնվում է Սյունիքի մարզի հարավում՝ մարզկենտրոն Կապանից 115 կմ հեռավորության վրա: Այն տեղակայված է Որոտան գետի ափերին, ծովի մակարդակից 1,600 մ բարձրության վրա:

Կլիմա. Սիսիանի կլիման բնութագրվում է սառը, երկարատև ձմեռներով՝ միջին ջերմաստիճանը -4,8°C է: Տարեկան միջին ջերմաստիճանը 6,9°C է, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կարող է հասնել մինչև 36°C, իսկ նվազագույնը՝ -34°C: Տարեկան միջին տեղումները կազմում են 532 մմ՝:

Գյուղատնտեսություն. Գյուղատնտեսությունը առանձնահատուկ կարևորություն ունի պիլոտային համայնքներում, որոնք հիմնականում մասնագիտացած են անասնապահության և բուսաբուծության ոլորտներում:


Բնակչություն. 30,575 մարդ՝ 2018 թ-ի հունվարի դրությամբ:

Տարածքային միավորներ. 2017-18 թթ տարածքային բարեփոխումների արդյունքում տարածաշրջանն ունի 2 համայնք, որոնք ներառում են 32 գյուղական և 2 քաղաքային բնակավայրեր:

Պիլոտային համայնքներ

Գորայք խոշորացված համայնք
(Գորայք, Ծղուկ, Սպանդարյան բնակավայրեր)
Սիսիան խոշորացված համայնք
(Շաքի, Բռնակոթ, Աշոտական բնակավայրեր)

Գյուղատնտեսական նպատակներով հողօգտագործումը պիլոտային համայնքներում (հա, %) 2016 թ-ի դրությամբ



ՀՀ Տարածքային
կառավարման և
զարգացման
նախարարություն



Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by

giz Deutsche Gesellschaft
für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH

SDA Strategic
Development Agency
Strategies for Development

Ընդհանուր տեղեկություն

- ✓ Հայաստանում բնական կերհանդակները՝ արոտավայրերը և խոտհարքերը, կարևոր ռեսուրս են հանդիսանում անասնապահության համար և նշանակալի արժեք են ներկայացնում կենսաբազմազանության տեսանկյունից:
- ✓ Բնական արոտավայրերի և խոտհարքերի վիճակը նշանակալիորեն վատթարացել է՝ երկրում անասնազխաբանակի կտրուկ աճի և արոտավայրերի ոչ պատշաճ կառավարման արդյունքում:
- ✓ Բնական էկոհամակարգերի վրա ազդեցության կտրուկ աճը բացասական է անդրադարձել կենսաբազմազանության, կերարտադրության և անասնապահական մթերքի արտադրության վրա՝ համապատասխանաբար ազդելով համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի վրա:
- ✓ Արոտավայրերի կայուն կառավարման վերաբերյալ ՀՀ Կառավարության կողմից ընդունված որոշումներ (թվագրված՝ 28.10.2010 թ. հ 1477-ն և 14.04.2011 թ. հ 389-ն):



Արոտավայրի վիճակի անցումը լավից դեգրադացվածի


Գործիքակազմը լայնորեն կիրառվում է արոտավայրերի կառավարման ոլորտում գործող մի շարք միջազգային և տեղական կազմակերպությունների (Համաշխարհային բանկի ՀԳԻԿՄ ծրագիր, ՇՁԳ-ի, ԱԶԳ-ի, ՄԱԶԾ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրեր, և այլն), ինչպես նաև Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կողմից՝ որպես ուսումնական նյութ: Այն հասանլի է ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության պաշտոնական կայքում և առաջարկվում է համայնքներին՝ օգտագործման համար:

ԳՄՀԸ Կենսաբազմազանության կայուն կառավարումը, Հարավային Կովկաս ծրագրի ձեռքբերումները (2013-2015 թթ.)*

- ✓ Նպատակ՝ մշակել և փորձարկել ՀՀ համայնքներում արոտների կառավարման բարելավմանն ուղղված գործառնությունային մոդել, աջակցելով ՀՀ Կառավարությանը՝ բարելավել արոտների կառավարման պլանավորումը և իրականացման եղանակները:
- ✓ Մշակվել է արոտավայրերի կայուն կառավարման գործիքակազմ, որը ներառում է՝ ա) արոտավայրերի մշտադիտարկման ձեռնարկը, բ) արոտավայրերի և խոտհարքերի կառավարման պլանավորման ուղեցույցը:
- ✓ 24 համայնքներ վերապատրաստվել են արոտների մշտադիտարկման և կառավարման պլանների մշակման ու իրականացման ոլորտներում:
- ✓ 24 համայնքներում իրականացվել է արոտավայրերի մշտադիտարկում:
- ✓ 19 համայնքներում մշակվել են արոտավայրերի կառավարման պլաններ:
- ✓ 19 համայնքներում գրանցվել է խոշոր և մանր կենդանիների կաթնատվության՝ 6,2% և մսատվության ցուցանիշների 2,3% աճ և դրանից ստացվող տարեկան համախառն եկամտի 15% միջին աճ (2014-2015 թթ.):



Արոտավայրերի կառավարումը տեղական համայնքներում



Արոտավայրերի մշտադիտարկում

ԳՄՀԸ ԿԻԿ ծրագրի աջակցությամբ իրականացվող միջոցառումներ



Փերմերների կողմից ստացվող կաթից՝ պանիր

Աջակցություն կաթի արժեշտային զարգացմանը՝ արոտավայրերի կայուն կառավարման նպատակով*

- ✓ Արոտավայրերի կառավարման գործընթացների բարելավելումը դրական ազդեցություն է ունեցել կենդանիների արտադրողականության և ֆերմերային տնտեսություններում արտադրվող կաթի ծավալների վրա: Այնուամենայնիվ, գյուղացիների սահմանափակ մուտքի հնարավորությունը կաթի շուկա խոչընդոտում է նրանց դրամական եկամուտ ստանալուն:
- ✓ Սիսիանի վեց գյուղական բնակավայրերում ապահովվել է գյուղացիների մուտքը կաթի շուկա՝ կաթի արժեշտային զարգացման միջոցով:
- ✓ Բարելավվել է Բոնակոթ համայնքի (Սեյրան Առաքելյան Ա/Ձ) կաթնամթերքի և պանրի արտադրանքի մրցունակությունը՝ սահմանափակ ներդրում կատարելով սարքավորումների ձեռքբերման մեջ (կաթի պաստերիզացիայի սարքավորում), բարելավելով հիգիենայի և անվտանգության չափանիշները:



Արոտավայրի վիճակի գնահատում

Հայաստանում բնական կերհանդակների (արոտավայրերի և խոտհարքերի) բարելավման ուղեցույց

- ✓ Դեգրադացված բնական կերհանդակների բարելավման միջոցառումների ուղեցույցի մշակում՝ ներառյալ գործիքներ, մեթոդներ և մոտեցումներ:
- ✓ Դեգրադացված կերհանդակների բարելավման նպատակով ընտրված գործիքների, մեթոդների և մոտեցումների փորձարկում և գնահատում, մասնավորապես՝*
 - տեղական ինքնակառավարման մարմինների և այլ ներգրավված կողմերի կարողությունների զարգացում,
 - բարելավման աշխատանքների կազմակերպում,
 - փորձարկումների արդյունքների հիման վրա առաջարկությունների տրամադրում՝ ուղեցույցը համալրելու և դրանում շտկումներ կատարելու նպատակով,
 - փորձարկումների արդյունքների, ինչպես նաև ուղեցույցի ներկայացում և քննարկում շահագրգիռ կողմերի հետ:



Քննարկում՝ բարելավման նպատակով արոտաբաժնի ընտրության համար



Փորձի փոխանակում համայնքների ներկայացուցիչների միջև

«Հյուսիս-հարավ» փորձի փոխանակում արոտավայրերի կայուն կառավարման վերաբերյալ

- ✓ 2017 թ-ի սեպտեմբերին Արագածոտնի և Շիրակի մարզերից փոխայց է կազմակերպվել Սյունիքի մարզի Սիսիան տարածաշրջան:
- ✓ Սիսիանի պիլոտային համայնքներում ԳՄՀԸ աջակցությամբ հաջողությամբ իրականացված արոտավայրերի բարելավված կառավարման փորձը մեծ հետաքրքրություն է առաջացրել մասնակիցների շրջանում:

*Գործողություններն իրականացվել են Ռազմավարական զարգացման գործակալություն (ՌԶԳ) ՀԿ-ի հետ սերտ համագործակցությամբ՝ «Անասնապահության զարգացումը Հայաստանի Հարավում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության կողմից: